ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ. III

21-րդ դարի մարտահրավերներ և հնարավորություններ

DEVELOPMENT OF ECONOMY AND SOCIETY:
Challenges and Opportunities of 21st Century

РАЗВИТИЕ ЭКОНОМИКИ И ОБЩЕСТВА:
вызовы и возможности 21-ого века

ՀՊՏՀ 27-ՐԴ ԳԻՏԱԺՈՂՈՎ

2017 թ., նոյեմբերի 22-24

Երևան 2018

ՀՏԴ 330:06
ԳՄԴ 65
Տ 778

Հրատարակվում է
ՀՊՏՀ գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական խորհրդի նախագահ՝

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ
ՀՊՏՀ ռեկտոր, տ.գ.դ., պրոֆեսոր

Խմբագրական խորհուրդ՝

ԴԻԱՆԱ ԳԱԼՈՅԱՆ - *ՀՊՏՀ միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի վարիչ, տ.գ.դ., դոցենտ*
ՍՈՒՐԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ - *ՀՊՏՀ բնօգտագործման տնտեսագիտության ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր*
ԱՇՈՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ - *ՀՊՏՀ հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետի դեկան, տ.գ.դ., պրոֆեսոր*
ԽՈՐԵՆ ՄԽԻԹԱՐՅԱՆ - *ՀՊՏՀ գիտության և ասպիրանտուրայի բաժնի պետ, տ.գ.թ., դոցենտ*
ԱՇՈՏ ՍԱԼՆԱԶԱՐՅԱՆ - *ՀՊՏՀ ֆինանսների ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր*
ՎԱՐԴԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ - *ՀՊՏՀ տնտես. ինֆորմ. և տեղեկ. համակ. ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր*
ՅՈՒՐԻ ՍՈՒՎԱՐՅԱՆ - *ՀՊՏՀ կառավարման ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ ակադ., տ.գ.դ., պրոֆեսոր*
ԳԱԳԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ - *ՀՊՏՀ պրոռեկտոր, տ.գ.դ., պրոֆեսոր*

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ. 21-րդ դարի մարտահրավերներ և
Տ 778 **հնարավորություններ**: ՀՊՏՀ 27-րդ գիտաժողովի նյութեր / ՀՊՏՀ: - Եր.: Տնտեսագետ, 2018, 780 էջ:

ՀՏԴ 330:06
ԳՄԴ 65

ISBN 978-9939-61-177-8

© «Տնտեսագետ» հրատարակչություն, 2018 թ.

ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ

Գիտաժողովի հարգելի՝ մասնակիցներ,

շնորհավորում եմ բոլորիս Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի 27-րդ գիտաժողովի բացման առթիվ և ցանկանում եմ շնորհակալություն հայտնել գիտաժողովի բոլոր մասնակիցներին, ովքեր հետաքրքրություն են ցուցաբերել տնտեսության և հասարակության զարգացմանն առնչվող հրատապ հարցերի նկատմամբ:

Մեր համալսարանի տարեկան գիտաժողովները գեղեցիկ ավանդույթ են դարձել, բայց ես ուրախությամբ եմ նշում, որ դրանց կողքին այսօր առկա են մեր համալսարանի գիտական գործունեությունն արտացոլող այլ ձևաչափեր նույնպես: Հպարտությամբ եմ նշում, որ հետազոտական համալսարան դառնալու և մեր պետության տնտեսական կյանքին մասնագիտական մասնակցություն ունենալու իմ տեսլականը կամաց-կամաց կյանքի է կոչվում: Համալսարանի «Ամբերդ» հետազոտական կենտրոնի գործունեությունն այսօր տալիս է նշանակալի արդյունքներ. այստեղ ոչ միայն իրականացվում են հանրապետության տնտեսական արդիական հիմնախնդիրների վերաբերյալ հետազոտություններ, այլև կենտրոնի աշխատակիցները բուհի դասախոսական կազմի ներկայացուցիչների հետ, որպես փորձագետներ, հանդես են գալիս համապետական քննարկումներում:

Մինչ տարեկան գիտաժողովի կազմակերպումը գիտական սեմինարների ձևաչափերով հանդես եկան մեր ամբիոնները՝ շնորհանդեսներով ներկայացնելով իրենց ուսումնասիրության առանցքում առկա թեմաները: Այս ուսումնական տարվանից տրվեց գիտաուսումնական լաբորատորիաների մեկնարկը, ինչը գիտական դրամաշնորհներ, գիտաուսումնական խմբեր և գիտահետազոտական կյանքի աշխուժացմանը միտված այլ ձևաչափեր ներդնելու մեր մոտեցումների հրաշալի շարունակությունն է:

Համալսարանի տարեկան գիտաժողովը ես հատկապես կարևորում եմ ակնկալիքով, որ այն պետք է վեր հանի մեր հավաքական գիտական ներուժը, ցույց տա համալսարանում գիտական կյանքի որակական փոփոխությունը և դառնա հետագա գործունեության յուրօրինակ ուղենիշ: Այս գիտաժողովի հիմքում տնտեսության և հասարակության զարգացման հարցերն են, որոնք ի ցույց են դնում մեր դարաշրջանի մարտահրավերներն ու հնարավորությունները: Իսկապես, սրանք այնքան փոխկապակցված և կարևոր հարցեր են, որոնք չպետք է անտարբեր թողնեն տնտեսագետներին, չէ՞ որ չի կարող լինել հասարակական զարգացման որևէ մակարդակ՝ առանց կենսունակ տնտեսության:

Հուսով եմ, որ գիտաժողովը՝ իր բաժանմունքներով և կլոր սեղաններով, հնարավորություն կտա մասնագետներին ներկայացնելու իրենց մոտեցումները, բացահայտելու գիտաժողովի խորագրում արտացոլված թեման՝ իր բոլոր շերտերով և նրբություններով: Այնպես որ, արգասաբեր և աշխույժ աշխատանք եմ մաղթում Ձեզ:

Շնորհակալ եմ ուշադրության համար:

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ
ՀՊՏՀ ռեկտոր, պրոֆեսոր

ВЕРГИНЕ КИРАКОСЯН

НАЦИОНАЛЬНАЯ ИННОВАЦИОННАЯ СИСТЕМА ИЗРАИЛЯ

Ключевые слова: *инновация, национальная инновационная система, наука, венчурный фонд, старт-ап, инновационная культура, мировая экономика*

Цель статьи исследовать основные тенденции Израиля и использовать их в экономике РА. Израиль быстрыми темпами стал инновационным гигантом в регионе и в мировой экономике. Модель успеха инновационных фирм Израиля – пример для тех стран, которые стараются вести экономику тем же путем.

VERGINE KIRAKOSYAN

NATIONAL INNOVATIVE SYSYTEM OF ISRAEL

Key words: *innovation, national innovative system, science, venture fund, start-up, innovative culture, global economy*

The main purpose of this article is to investigate the main development tendencies of national innovative system of Israel and used them in the economy of the RA. Israel quickly became an innovative giant in the region and in the global economy. The model of success of innovative firms is an example for those countries that try to conduct the economy in the same way.

ԴԱՎԻԹ ՀԱԽՎԵՐԴՅԱՆ
Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր, ՀՊՏՀ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ. ՄԻԱԲԵՎԵ՞Ռ, ԹԵ՞ ԲԱԶՄԱԲԵՎԵՌ ԱՇԽԱՐՀ

Հիմնաբառեր. *միջազգային ֆինանսական համակարգ, երկրորդային էֆեկտ, արժութային փոխարժեք, պահուստային արժույթ*

Գոյություն ունեն պարբերաշրջանային փոխկապվածության մի շարք ուղիներ («խողովակներ»), որոնցից կարևորը գործում է էլ ավելի գլոբալացվող, խոշոր ու բարդ ֆինանսական շուկաների միջոցով: Միջազգային ֆինանսական (ոչ) համակարգի տարբեր թերություններն արտացոլում են գլոբալ անհավասարակշռությունները: Ճգնաժամերը կկրկնվեն նորից ու նորից, քանի դեռ չեն վերացվել այդ թերությունները: Այն մասնագետները, ովքեր կարծում են, որ զարգացող երկրներում երկրորդային ազդեցությունների դերը կարող է զգալի լինել, կախված զարգացած տնտեսություն ունեցող երկրներում տեղի ունեցող իրադարձություններից, տուժած երկրներին առաջարկում են ինքնապաշտպանության մի քանի եղանակներ, որոնք ներկայացված են սույն հոդվածում:

Գոյություն ունեն պարբերաշրջանային փոխկապվածության մի շարք ուղիներ («խողովակներ»)[1], որոնցից կարևորը գործում է էլ ավելի գլոբալացվող, խոշոր ու բարդ ֆինանսական շուկաների միջոցով: ԱՄՀ զեկույցներից մեկում չափվում է, այսպես կոչված, «երկրորդային էֆեկտը», այն է՝ ներկայիս տնտեսության առևտրային և ֆինանսական կապերի արդյունքում մեկ երկրի կողմից ձեռնարկված միջոցների ազդեցությունը մեկ այլ երկրի վրա, որի հիման վրա էլ փաստաթղթավորվում է ֆինանսական ուղու նշանակությունը: Եվրագոտու օրինակով՝ հեղինակները եզրահանգում են, որ ԱՄՀ ծրագրերն իրականացնող եվրագոտու երկրներում լարվածության «ուղղակի» (առևտրի հետ կապված) էֆեկտները վերահսկողության դաշտում են, սակայն եթե լարվածությունը կասկածի տակ դնի եվրագոտու բանկերի կայունությունը, մնացած աշխարհի համար երկրորդային էֆեկտները զգալի կլինեն և բազմաթիվ դեպքերում չեն զիջի Lehman Brothers-ի սնանկացման հետևանքներին[2]: Զեկույցում նաև ասվում է, որ սթրեսային ֆինանսական պայմաններում, օրինակ՝ ակտիվների «պղպջակային» գների «պայթեցման» կամ փոխառու միջոցների մեծ տեսակարար կշիռ ունեցող բանկերի սնանկացման դեպքերում, երկարաժամկետ պարտատոմսերի եկամտաբերության հետ կոռելյացիան զգալիորեն ուժեղ է, որը ցույց է տալիս ֆինանսական ուղու ամրության կախվածությունը համաշխարհային ֆինանսական շուկաների ընդհանուր իրավիճակից[3]: Տոկոսադրույքների կառուցվածքում, գործիքների ժամկետներից կախված, կատարվող փոփոխությունները ֆինանսական կազմակերպությունների և վարկային պայմանների շահութաբերության միջոցով նույնպես ազդում են տնտեսական պարբերաշրջանի զուգահեռ դինամիկայի վրա[4]:

Միջազգային ֆինանսական (ոչ) համակարգի տարբեր թերություններն արտացոլում են գլոբալ անհավասարակշռությունները: Ճգնաժամերը կկրկնվեն նորից ու նորից, քանի դեռ չեն վերացվել այն թերությունները, որոնց մասին խոսվելու է ստորև:

Նախ՝ գոյություն չունի միջազգային հաշվարկների ճշգրտման ավտոմատ մեխանիզմ: Խոշոր պարտքով և/կամ ընթացիկ գործառնությունների հաշվի պակասուրդով երկրները պետք է ազատ լողացող փոխարժեքով արժույթների շուկայի պայմաններում նվազեցված ճնշում զգան իրենց արժույթների վրա: Ավելի թույլ արժույթը կէժանացնի արտահանումը, որն էլ կհանգեցնի արտադրության մեջ տեղաշարժերի՝ արտաքին պահանջարկը բավարարելու համար: Այդ դեպքում քաղաքականության միջոցառումները պետք է օգտագործվեն ներքին պահանջարկը կրճատելու համար, որպեսզի արտադրությունը կարողանա հարմարվել արտաքին պահանջարկի բավարարմանը: Հակառակ ուժերը պետք է սկսեն գործել մեծ ավելցուկ ունեցող երկրներում: Իրադարձությունների նման հաջորդականու-

---

[1] Дервиш К., Мировая экономика: конвергенция, взаимозависимость и расхождения, “Финансы и развитие”, МВФ, сентябрь 2012, с. 10-13.

[2] IMF, 2011, “Consolidated Spillover Report: Implications from the Analysis of the Systemic-5” (Washington).

[3] Claessens, Stijn, M. Ayhan Kose, and Marco Terrones, 2011, “How Do Business and Financial Cycles Interact?” IMF Working Paper 11/88 (Washington: International Monetary Fund).

[4] Hakhverdyan D., Cyclical Interrelation of National Economies and Origins of Global Economic Crisis, «Экономика и предпринимательство», N12 (53), (Journal of Economy and entrepreneurship, Volume 8, number 12), 2014, c. 40, http://www.intereconom.com/archive/206.html

թյունը թույլ է տալիս հաշվարկված ճշգրտումներ իրականացնել ու կանխել թե՛ պակասուրդ, թե՛ ավելցուկ ունեցող երկրների միջև աճող անհավասարակշռությունը, ինչպես նաև խուսափել ճգնաժամից:

Սակայն, գործնականում հաճախ երկար ժամանակ է պահանջվում, որպեսզի այս ուժերն անհրաժեշտ կերպով աշխատեն: Միամիտ է կարծել, որ ազատ լողացող արժութային փոխարժեքները կլուծեն ընթացիկ գործառնությունների հաշվի անհավասարակշռության խնդիրները.

- Արժութային փոխարժեքների փոփոխությունները, ամենայն հավանականությամբ, կապված չեն պարտապանների ու վարկատուների միջև առկա երկարաժամկետ հարաբերությունների հետ: Փոխարժեքի բարձրացումից կամ իջեցումից հարստանալու նպատակով տարբեր արժույթների առք ու վաճառքով զբաղվող առևտրականների կողմից իրականացվող կարճաժամկետ ներցիոն գործողությունների արդյունքում արժութային փոխարժեքները կարող են տարիներով շեղվել տնտեսական որոշիչներին համապատասխանող մակարդակներից:
- Արժութային փոխարժեքները ոչ միշտ կամ, ծայրահեղ դեպքում, արագ չեն հանգեցնում արտադրական ներուժի ցանկալի տեղաշարժերի: Օրինակ՝ ճապոնական իենի ու ֆունտ ստերլինգի փոխարժեքների վերջին նվազումները չհանգեցրին արտահանման ծավալների ավելացմանը:
- Ներքին քաղաքականությունը չպետք է ինչ-որ կերպ արտացոլի արտաքին տնտեսական կողմնորոշումը: ԱՄՆ-ը աշխարհում ամենախոշոր պարտապանն է, սակայն դա նրան չի խանգարում, որ ընդհանուր պահանջարկի համեմատաբար թույլ ժամանակաշրջաններում քաղաքականության ավելի շատ քայլեր կիրառի, որոնք կխթանեն ներքին պահանջարկը: Նույնկերպ Ճապոնիան, Գերմանիան ու Չինաստանը համարվում են խոշոր վարկատուներ, սակայն ոչինչ չի կարող խանգարել նրանց՝ փորձելու ավելի շատ ընդլայնել արտահանումը՝ ի պատասխան ընդհանուր պահանջարկի թուլացման: Ավելի երկարաժամկետ տեսանկյունից, վերջին ջանքերը, որոնք ուղղված են եվրոյի ու իենի փոխարժեքների նվազեցմանը, օգտակար չէին և կարող էին նույնիսկ հրահրել Չինաստանի կողմից նման պահվածքը:

Երկրորդ՝ երկրորդային ազդեցությունները, որոնք առաջանում են զարգացած տնտեսություն ունեցող երկրների դրամավարկային քաղաքականության միջոցառումների արդյունքում, խանգարում են տնտեսական գործունեությանը: Այն իրավիճակներում, երբ ԱՄՆ-ում տոկոսադրույքները գտնվում են ցածր մակարդակի վրա, իսկ միջազգային փոխառությունների մեծ մասը գնանշված է ԱՄՆ դոլարով, այլ երկրների երկարաժամկետ տոկոսադրույքներն ավելի շատ են կոռելացվում ԱՄՆ տոկոսադրույքների հետ: Արդյունքում այլ երկրներում ծախսերի խթանող ազդեցությունն ազդում է ներկա պահին արտադրվող ապրանքների ու մատուցվող ծառայությունների, նաև ակտիվների գների վրա: Որոշ գիտնականներ կարծում են, որ միակ ելքը, որի միջոցով այս երկրները կարող են վերականգնել դրամավարկային քաղաքականության իրականացման հարցում իրենց անկախության թեկուզ մի մասը, կապիտալի շարժի նկատմամբ հսկողության միջոցառում-

ներն են, որոնք ներառում են կապիտալի ներհոսքի ու արտահոսքի նկատմամբ տարբեր տեսակի ու խստության սահմանափակումներ[1]:

Ավելին, դրամավարկային խթանման միջոցառումները, ամենայն հավանականությամբ, թուլացնում են ներդրողների կողմից ռիսկի ընկալումը: Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամից առաջ այս իրավիճակը տանում էր նրան, որ համաշխարհային մասշտաբով աշխատող բանկերը մեծացնում էին վարկավորումն ավելի արագ, քան կապիտալը (այսինքն՝ մեծացնում էին փոխառու միջոցների ու սեփական միջոցների հարաբերակցությունը), նաև կտրուկ ավելացնում էին փոքր երկրներին տրվող փոխառությունները: Ճգնաժամից հետո Միջազգային հաշվարկների բանկը նշեց, որ կապիտալի միջազգային հոսքերը դառնում են ակտիվների կառավարմամբ զբաղվող ընկերությունների գործողություններին ենթակա, որոնք ձեռք են բերում զարգացող երկրների վերազգային կորպորացիաների կողմից թողարկված պարտատոմսեր: Այս պարտատոմսերի մեծամասնությունը (հատկապես՝ Լատինական Ամերիկայում ու Հարավարևելյան Ասիայում) թողարկվում է օֆշորային ֆինանսական կենտրոններում և գնանշվում է ԱՄՆ դոլարով: Սա համապատասխանաբար մեծացնում է արժութային կառուցվածքի անհամապատասխանության խնդիրների առաջացման վտանգն այն դեպքում, եթե ԱՄՆ դոլարը շարունակի դիրքերի ամրապնդումը: Բացի այդ, արժութային փոխարժեքի զսպման համար նախատեսված կապիտալի նման հոսքերը, քաղաքականության միջոցառումների հետ միասին, սպառնում են ինչպես գնաճի, այնպես էլ այլ անհավասարակշռությունների առաջացմամբ, որոնք կապված են զարգացող երկրներում վարկավորման արագ ընդլայնման հետ[2]:

Այդուհանդերձ, չայած ֆինանսական շուկաներում առաջատարի դիրքերը պահպանելու ԱՄՆ-ի ջանքերին, երկարաժամկետ հատվածում (օրինակ՝ 2030 թ.) այն, ամենայն հավանականությամբ, կորսված կլինի, համենայն դեպս, ներկայիս տեսքով: Մեր կարծիքով, համաշխարհային ֆինանսական շուկաներում ԱՄՆ-ի գերիշխանության կորստի օգտին խոսող հիմնական փաստարկը ԱՄՆ դոլարի կարգավիճակի փոփոխությունն է, այսինքն՝ 2030 թ. այն այլևս չի լինի գերիշխող պահուստային արժույթ: Դա պատճառաբանվում է հետևյալ երկու գործոնով. 1) համաեվրոպական պետական արժեթղթերի թողարկումը, որի շրջանակներում, ըստ կանխատեսումների, կներդրվի ամերիկյան U.S. Treasuries-ում ներդրվող գումարների շուրջ կեսը, 2) ԱՄՆ-ի և Չինաստանի հնարավոր առճակատումը, որի ընթացքում Չինաստանը կարող է կիրառել «տնտեսական զենք»՝ վաճառելով վերը նշված ամերիկյան արժեթղթերը (ներկայումս Չինաստանը տիրապետում է ամերիկյան պետական արժեթղթերի շուրջ 10%-ին՝ մոտ 1,1 տրլն ԱՄՆ դոլար արժեքով) և փլուզել ինչպես U.S. Treasuries-ը, այնպես էլ ԱՄՆ դոլարի շուկաները[3]: Նման

---

[1] Уильям Р. Уайт, Системный сбой; Финансы и развитие, Ежеквартальный журнал Международного валютного фонда, март 2015, выпуск 52, номер 1, с. 45-46.

[2] Նույն տեղում, էջ 46:

[3] Экономика, 16 фев, Китай рекордно сократил вложения в госдолг США, http://www.rbc.ru/economics/16/02/2017/58a58b162ae596218925c6e8

հարվածից հետո ԱՄՆ դոլարը կկորցնի թիվ մեկ համաշխարհային պահուստային արժույթի իր դիրքը[1]:

Բացի դրանից, ԱՄՆ քաղաքական հավակնությունների և տնտեսական հնարավորությունների անհամապատասխանությունը հանգեցնում է պետական պարտքի արագ աճին, որը ներկայիս միտումների պահպանման դեպքում առաջիկա շուրջ 10 տարիների ընթացքում կհասնի ներդրողների համար անընդունելի չափերի՝ ՀՆԱ-ն գերազանցելով 2-3 անգամ, որը կարող է ավարտվել խուճապով, պետական արժեթղթերի փոխարժեքների կտրուկ անկմամբ և ամերիկյան ֆինանսական համակարգի նկատմամբ վստահության կորստով:

Նշված սցենարներից ցանկացածի իրագործման դեպքում ԱՄՆ դոլարի փոխարժեքը կարող է մոտ 3 անգամ անկում ապրել, որն ի հայտ կբերի դժվարլուծելի և ցավագին համալիր խնդիրներ, ինչպես ամերիկյան, այնպես էլ համաշխարհային տնտեսության համար:

Ամերիկյան արժեթղթերի կտրուկ արժեզրկումը կբերի ամերիկյան ֆինանսական ինստիտուտների փլուզմանը (որպես ԱՄՆ դոլարով գնանշված ակտիվների արժեքի անկման հետևանք) և իրենց պարտավորությունների չկատարմանը, բնակչության ու ֆինանսական շուկաների այլ մասնակիցների խնայողությունների համանման արժեզրկմանը: Այս սցենարի առավել ցավագին հետևանքներից մեկը կդառնա ամերիկյան թողարկողների անկարողությունը՝ սպասարկելու իրենց արտաքին պարտքերը, քանի որ օտարերկրյա արժույթով արտասահման կատարվող վճարումները ԱՄՆ դոլարի փոխարժեքի անկմանը համամասնորեն աճում են[2]: Համապատասխանաբար, բավական հավանական է ԱՄՆ-ի ֆինանսական դեֆոլտը, որը կփլուզի համաշխարհային ֆինանսական համակարգը: Հենց այս գործոնը իր մասշտաբներով կդառնա աննախադեպ ֆինանսական ճգնաժամի կանխորոշող պատճառը, որի արդյունքում արմատապես կփոխվի ներկայիս համաշխարհային ֆինանսական համակարգը՝ ԱՄՆ դոլարի և առհասարակ ԱՄՆ-ի ընդգծված գերիշխանությամբ[3]:

Ի՞նչ քաղաքականություն պետք է որդեգրեն փոքր և բաց տնտեսություն ունեցող երկրները, այդ թվում՝ Հայաստանը, համաշխարհային տնտեսության կառուցվածքային տեղաշարժերի հետևանքով հնարավորին չափով անցնցում և շահեկան վիճակում դուրս գալու համար:

Արտաքին առևտրի բացությունը համարվում է մեր երկրի երկարաժամկետ քաղաքականության բաղադրիչը, այդ պատճառով անհրաժեշտ է շարունակել դրա տեսական հիմքերի բազմակողմանի մշակումը: Ընդհանրացնելով արտաքին տնտեսական գործու-

---

[1] Додонов В.Ю., Основные тенденции развития мировой экономики и Казахстана до 2030 года. - Алматы: КИСИ при Президенте РК, 2011, с. 15-16.

[2] Նույն տեղում, էջ 16:

[3] Hakhverdyan D., Cyclical Interrelation of National Economies and Origins of Global Economic Crisis, «Экономика и предпринимательство», N12 (53), (Journal of Economy and entrepreneurship, Volume 8, number 12), 2014, c. 41; http://www.intereconom.com/archive/206.html

նեության և առևտրային գործունեության փորձը՝ պետք է մանրամասն սահմանվի արտաքին առևտրային բացության և տնտեսական զարգացման միջև փոխադարձ կապը: Դա թույլ կտա արտաքին առևտրային բացության օգտագործման միջոցով լուծել տնտեսության կառուցվածքային հիմնախնդիրները:

Օտարերկրյա ներդրումների, առաջին հերթին՝ ՎԱԿ-երի միջոցով պետք է ստեղծել բարենպաստ պայմաններ համաշխարհային տնտեսական համակարգին սահուն ինտեգրվելու և մրցունակ արտադրանք թողարկելու համար:

Այս համատեքստում առաջանում են հարցադրումներ, որոնց պատասխաններն էապես կբարելավեն ՀՀ տնտեսության կառուցվածքն ու մրցունակությունը: Մասնավորապես՝ մարդկային ռեսուրսների բնույթն ու նրանց գիտատեխնիկական պատրաստվածությունն ի՞նչ կերպ են կանխորոշելու երկրի տնտեսական հզորությունն ու միջազգային մրցունակությունը: Ինչպե՞ս է գիտատեխնիկական առաջընթացը փոխելու ֆինանսական և առևտրային գործունեության եղանակները, և ինչպե՞ս է այն խթանելու կապիտալի աճն ու իրացման նոր շուկաների որոնումը[1]:

Այն մասնագետները, ովքեր կարծում են, որ զարգացող երկրներում երկրորդային ազդեցությունների դերը կարող է զգալի լինել, կախված զարգացած տնտեսություն ունեցող երկրներում տեղի ունեցող իրադարձություններից, տուժած երկրներին առաջարկում են ինքնապաշտպանության մի քանի եղանակներ[2]: Հետևյալ առաջարկությունները հանգում են վերը նկարագրված մեխանիզմի ներսում ազդեցության ուղիների չեզոքացմանը՝

- կիրառել կարգավորման գործիքներ՝ միջազգային մակարդակով աշխատող բանկերի նկատմամբ փոխառու միջոցների մասնաբաժինը կրճատելու նպատակով, նաև կարգավորման միջոցներ՝ ակտիվների կառավարմամբ զբաղվող խոշոր ընկերությունների կողմից երկրից կապիտալի արտահանումը հսկելու համար,
- թույլատրել ազգային արժույթի դիրքի ավելի ամրապնդումը,
- կապիտալի հետ կապված գործողությունների նկատմամբ հսկողություն իրականացնել՝ դրա հոսքերը կարգավորելու համար,
- նվազեցնել նման հոսքերի հետևանքները մակրոպրուդենտալ (համընդգրկուն) քաղաքականության միջոցառումների միջոցով, այսինքն՝ քաղաքականության կարգավորիչ միջոցառումներ, որոնք ուղղված են ամբողջ ֆինանսական համակարգի կործանման ռիսկի նվազեցմանը և ոչ թե տնտեսական քաղաքականության ավանդական միջոցառումների կիրառում՝ կողմնորոշված դեպի առանձին կազմակերպություններ:

---

[1] Նույն տեղում:

[2] Уильям Р. Уайт, Системный сбой, Финансы и развитие, Ежеквартальный журнал Международного валютного фонда, март 2015, выпуск 52, номер , с. 46.

ДАВИД АХВЕРДЯН

МЕЖДУНАРОДНАЯ ФИНАСОВАЯ СИСТЕМА: ОДНОПОЛЯРНЫЙ ИЛИ МНОГОПОЛЯРНЫЙ МИР?

Ключевые слова: *международная финансовая система, вторичный эффект, валютный курс, резервная валюта*

Существуют ряд каналов циклической взаимозависимости, главный из которых действует через все более глобальные, огромные и сложные финансовые рынки. Различные недостатки существующей международной (не)системы по сути отображают дисбалансы. Кризисы будут повторяться вновь и вновь, пока не исправлены эти недостатки. Специалисты, которые полагают, что роль вторичных влияний на развивающиеся страны может быть существенной, в зависимости от событий, происходящих в развитых странах, предлагают ряд способов по самозащите, которые представлены в данной статье.

DAVIT HAKHVERDYAN

INTERNATIONAL FINANCIAL SYSTEM: UNIPOLAR OR MULTIPOLAR WORLD?

Key words: *International Financial System, Secondary Effect, Exchange Rate, Reserve Currency*

There are number of channels of cyclical interdependence, the main of which operates through even more global, huge and complex financial markets. The various disadvantages of the existing international system in fact reflect imbalances. Crises will be repeated again and again, until these disadvantages are corrected. Experts who believe that the role of secondary influences on developing countries can be significant, depending on the events taking place in developed countries, they offer a number of ways to protect themselves, which are presented in this article.

ՌՈԲԵՐՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Ասպիրանտ, ՀՊՏՀ

ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԵՐԿՐԻ ԱՐՏԱՔԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՊԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԻՔ

Հիմնաբառեր. *տնտեսական դիվանագիտություն, կայուն զարգացում, գլոբալացում, տարածաշրջայնացում, բարեփոխում, տնտեսության բացություն, հովանավորչություն, մրցունակություն*

Տնտեսական դիվանգիտությունը պետության կարևորագույն գործառույթներից մեկն է, որը ժամանակակից պայմաններում ձեռք է բերել համալիր, համակարգային բնույթ: Ժամանակակից տնտեսական դիվանագիտության հիմնական նպատակը միջազ-